Առաջնորդ՝ Պողոս Վարդապետը թող տայ նոյն գումարները Վանի բերդին և ինծի, ամէն տարի, և 100 ղրշ., զոր ծախսեցի Մարտիրոս Կաթողիկոսին ֆարմանին համար»։ Պողոս Վարդապետ և հայ իշխանները յանձն կ՚առնեն այդ գումարները տալ, և Ապտուլլային գրաւոր յայտարարել կու տան՝ թէ այսուհետև «ես և Աղթամարի Կաթողիկոսը եթէ դաւեանք կամ ձեռնամուխ ըլլանք այս վիճակներուն, թալպիս և խաբեբայ պիտի ըլլանք» (2)։

Թէպէտ Սուլթանին ֆերմանը Էջմիածնի անունով գրուած է, սակայն այս երկու հուճաթները, զորս յիշեցինք, կը գրուին յանուն Վարագայ Ս. Նշան Վանքին, վասնզի այն ժամանակ սաստիկ պատերազմ կը մղուէր պարսիկներու և օսմանցիներու միջև, և Էջմիածին՝ պարսիկներու իշխանութեան ներքև էր, և Վանն ու շրջակայքը օսմանցիներու կը պատկանէին։ Այս պատճառաւ վերոյիշեալ կարգադրութիւնը կ՚ընէ Յակոբ Ջուղայեցի Կաթողիկոս, որպէս զի «կտրէ թունալի լեզուներն անոնց», որոնք կ՚ամբաստանէին Էջմիածնի Աթոռը, ըսելով՝ թէ օսմանցիներու երկրէն ինչքեր կը ժողվեն և պարսիկներու երկիրը կը տանին (3)։

Մինչ Յակոբ Կաթողիկոս ընդդէմ Աղ-

---

(2) Անդ, 94։

(3) Անդ, 94—95։